ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

04.06.18 N 14/Ազ/6459-18
Ձեր N

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոդոյան

Ի պատասխան 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 4/12867-18 գրության՝ հայտնում եմ, որ.

1. Էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման համար սահմանված են գործողությունների և ներդրման ժամանակացույց ինչպես վարչապետի որոշմամբ (կցված է), այնպես էլ ՀՀ ԱՆ ներքին աշխատանքային փաստաթղթով: Նախարարությունն արդեն հանդես եկել է հայտարարությամբ, որ էլ. առողջապահության համակարգի ներդրման հետ կապված որոշ ժամկետներ հետաձվում են (գրությունը կցված է): Նշված հանգամանքով պայմանավորված, ներկայումս խմբագրվում է էլ. առ. համակարգի ներդրման ժամանակացույցը, որը ներառում է բոլոր կարևոր կետերը. այն է՝ կազմակերպությունների ինտեգրում համակարգին, ծրագրային ապահովումներ, իրավական դաշտի բարեփոխումներ, դասընթացների իրականացում, ֆինանսավորման հարցեր, տեխնիկայի ձեռքբերում, ինտեգրում այլ ծրագրերին և այլն: Համապատասխան փոփոխությունների և խմբագրման արդյունքում հնարավոր կլինի ներկայացնել գործողությունների պլանը և հստակ ժամանակացույցը, քանի որ հինն արդեն ժամանակավրեպ է:

2. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված վարկային համաձայնագրի (Հանրային հատվածի արդիականացման երկրորդ ծրագիր) շրջանակում մշակված և «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության կառավարման ներքո գտնվող էլեկտրոնային առողջապահության համակարգը կոնցեսիոն պայմանագրով օպերատորին փոխանցելու գործընթացը կանոնակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 26-ի թիվ 95-Ն որոշմամբ հայտարարվել է ՀՀ ԷԿԵՆԳ-ՄԵԾՁԲ-N17/2 ծածկագրով մրցույթ: Մրցույթի գնման առարկա է հանդիսանում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգի օպերատոր հիմնադրելու եղանակով կոնցեսիոն պայմանագրով որոշակի ծրագրային փաթեթ, շարժական գույք և այդ տեղեկատվական համակարգի սպասարկման իրավունքների փոխանցումը: Նշված գույքի արժեքը կազմում է 529,4 մլն. դրամ և կառավարությունը հանձնել է «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ին 01.09.2017թ: Այնուհետև, 2018թ. «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ն պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների գոյացած դրամական միջոցներից ձեռք է բերել ևս 72,2 մլն. դրամի գույք: Կախված համակարգի ինտեգրման աստիճանից, նշված գույքը, որը իրենից ներկայացնում է հիմնականում սերվերներ, ընթացիկ վերազինվելու և համալրվելու է:

Բացի այդ, նախատեսվում է ֆինանսական միջոցներ հատկացնել նաև դասընթացների անցկացման և պետական կազմակերպությունների համար անհրաժեշտ պարամետրերով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման համար: Ինչպես նախորդ կետում արդեն նշվել է, ներկայումս խմբագրվում է գործողությունների պլանը, ժամանակացույցը, ճշտվում են որոշ հաշվարկներ: Այդ աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր կլինի տրամադրել ճշտված ֆինանսական հաշվարկ համակարգիչների ձեռքբերման և դասընթացների իրականացման համար:

Ծրագրի ընթացիկ թարմացումների, լրացուցիչ ապահովումների վրա «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ն աշխատում է իր ծառայությունների մատուցման պարտավորության շրջանակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ՍԱՄՎԵԼ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

01.06.2018

X

VERIFIED OCSP 01.06.2018 12:42:14 GMT+4

Signed by: SOGHOMONYAN SAMVEL 3611750433

Կատարող՝
ՀՀ ԱՆ ներքին աուդիտի
Բաժնի մասնագետ
Աննա Կարապետյան
Հեռ.՝ 060 808003/2403